որի, որ միավորեն իրենց արժանապատվությունը և ահա լեզվի կռիվը փոխվում էր ցինամարտի, «Հավարև յա, հավարև» օգնության կանչին։ Հասնում էին ցինված բրդեր, պատյանից մերկացվում էին սրերը, ծխում էր շեշխանեն, զարծում էին թրերը, դանակները, և ծայր էր տալիս փախեփախը։ Թաղարը ամայանում էր, մնացած իրերը կողոպտվում, տասնյակ թուրք գիակների վրայից կոխկրտելով անցնում էին սազմիկները և բարձրանում բովնուի սարը։ Քրդերի հեռանալուց հետո իրենց թարսաոցներից դուրս էին գալիս կարգը պահպանելուն սահմանված մի տասնյակ ժանդարմներ և դեպքի մասին հեռագրում Խարբերդ կամ Խոզաթ։

Թաղարները անցք էին ունենում ապրիլ ամսից մինչև հոկտեմբերի վերջերը։ Ձմռան հինգ ամիսներին դադարում էր ամեն երթևեկություն, ձյան հաստ խավը ծածկում էր սար ու ձոր և կղզիացնում լեռնաշխարհը արտաքին աշխարհից։

ՀԱՇԻՎ ԵՎ ՉԱՓԵՐ

Աշխարհից կտրված և ինքն իր սահմաններում կղզիացած լեռնաշխարհի բնակչությունը գործ չուներ մեծ թվերով հաշիվների հետ, հաշվարկման թվերը սահմանափակ էին։

Խուրձերի, խորոմների, ձվի, ընկույզի հաշվումները կատարում էին բարդ–երով։ «Բարդ մի խոտ, բարդ մի հավկիթ, բարդ մի ընկույզ» և այլն։ Բարդը 30 խուրձ կամ խորոմ կազմող դեզն էր։

Հնուց ի վեր ավանդաբար պահվում էր իրեք (երեք) և օխթ (յոթ) թվերի նախապատվությունը։ Կռիվների, խրախճանքի, հավարի և այլ առիթներով օգտագործում էին «իրեք հեղ նշան տալ», «իրեք հեց օխտը», նույնիսկ հայհոյանքի կամ օրհնության ժամանակ գործածում էին «օխտը պապուտ...» կամ «ասված օղորմի օխտը պապուտ հոգուն» դարձվածքները։ Այդ սովորությունը ընդհանուր էր թե հայերի, թե քրդերի համար, բացառյալ հայերի մեջ ամուսնության հասի և չըհասի ազգակցական կապի, որ հաշվում էին «օխտը պորտ»։ Քրդերը այդ հաշվումը չունեին։

Բարդի սարքագրյալ թվերը 30-ի մեջ բաժանելի բոլոր թվերն էին՝ չուխա, իրեք, հինգ։ Այդ թվերով կատարում էին հաշվումները, մինչև որ հասնեին բարդին, որը այլևս դառնում էր միավոր։

Ավելի մեծ թվերով հաշվումներ կատարելու ժամանակ գիմում էին համրիչի (աերողորմյա) հատիկների օգնությանը, որոնք շգիտես ինչու անպայման կազմված էին լինելու 33, 49 և կամ 99 հատից։ 33 հատ կրող ամեն մի համրիչի հատիկը միավոր էր, եթե հատերն էին հաշվում, ամբողջը բարդ էր, եթե բարդերն էին հաշվում։ 49 հատիկ ունեցող համրիչը իր գլխի միացնող հատիկով դառնում էր 50 հատ, որի ամեն մի հատիկը տասնավոր էր, 50 հատիկը հավասար էր 500-ի։

Հաշվական նախնական այս ձևում գլխավոր դերը վերապահված էր երրորդ տեսակի համրիչին, որի 99 հատիկներից ամեն մի հատիկը հարյուրավորի դեր էր կատարում, իսկ համրիչի երկու ծայրերը միացնող ավելի երկար կամ հաստաչափ ավելացնելով 99-ին, համազոր էր 10,000-ի։

Կաթնափոխատվության ժամանակ (խազ) հաշվումները կատարում էին վերից վար ուղղահայաց ձևով հավասար մասերի բաժանված փայտե գավազանի վրա կատարված նշումներով՝ Iնոր: Գավազանի կեսը մնում էր փոխ ավողի մոտ, մյուս կեսը՝ փոխ առնողի մոտ։ Չափը բաղդան, սեռնիճ կամ փոքր փարչ էր, վերադարձվելու պարտքային ջնջում էին երկու մասերի միացյալ քեռթը։

Ավելի փոքր հաշվումները կատարում էին ձեռքի մատներով։ Մի ձեռքի չորս մատը իրենց ստորաբաժանումներով՝ խաղերով, հավասար էին 12 համրանքի և կամ մի դյուժինի։ Երկու ձեռքի տասը մատը մի բարդ էր, մի ձեռքը՝ կես բարդ։

Կային գյուղեր, որ փոխանակ ասելու տասը, քսան, երեսուն, ասում էին՝ մեկ տաս, երկու տաս, երեք տաս և այլն։

Նույն ձևով էին հաշվում նաև քրդերը։ Նմուշի համար արձանագրենք նաև քրդական թվերը իրենց գործածական անուններով։ 1-ժու, 2-տըսէ, 3-հիրև, 4-չար, 5-բաճն, 6-շեշ, 7-հավթ, 8-հեշտ, 9-նեվ, 10-տես, և հայերի նման տասի վրա ավելացնելով մեկը, հաշվում էին մինչև 20-վիշտ. 30-հիրխս, 40-չեվրես, 50-բանջաս, 60-շեշտաս, 70-հավթա, 80-հեշտաս, 90-նեվա, 100-սե, 1000-հազար։

Այս կարգաթվերը ունենալով հանդերձ, կային գյուղեր, որ փոխանակ «վիշտա» ասելու, որ նշանակում է 20, հայերի նման ասում էին տրաև տես. հիրև տես-երեք տասը (30), բայց երբ կարգով համրում էին, չէին ասում՝ հիրև տես ու ժու, հիրև տես ու տրաև, հիրև տես ու հիրև, այլ ասում էին ուղիղ՝ հիրխս ու ժու, հիրխս ու տրաև, հիրխս ու հիրև, այսինքն՝ երեսուն և մեկ, երեսուն և երկուս, երեսուն և երեք և այլն։

Լեռնաշխարհի մի շարք գյուղերում, ուր դրեկկարդացողներ չկային, եթե համրանքը, գումարու-

մը և հանումը կատարում էին ձեռքի մատների, համրիչի հատիկների օգնությամբ, ապա բաժանումը կատարում էին «մեկ ինծի, մեկ քեզի»-ի հաշվարկությամբ։ Բաժանելին և բաժանարարը լոշվագի (լուրիա) կամ քիլուտի (ոլոռն) հատիկն էր։ Նախ համրում էին բաժանելին, ապա բաժանարարի թվի համաձայն կիրառում «մեկ ինծի, մեկ բեզի»-ն կամ՝ «մեկ չուզի ինծի, երկու չուխը բեզի» և շարունակաբար, մինչև որ բաժանելի համրանքը, որ ճշտված էր նաև համրիչի միավորի, տասնավորի և հարյուրավորի հիման վրա, սպառվեր։

Թվաբանական չորս գործողությունների մասին գաղափար չունեին, իրենց հաշվարկման բոլոր գործողությունները կատարում էին վերը նշված հաշվարկմամբ։

Կշեռքը պահում էր նախնադարյան ձևը։ Մեջից փայտի երկու կողմերից երեքական լարանների մի-մի ծայրերը ամրացված էին փայտի երկու ծայրերին, իսկ մյուս ծայրերը՝ կլոր թասերին (թաթ)՝ փայտի ճիշտ կենտրոնում անցըված էր լարանե երկծայր բռնակը։

Կշռելու համար օգտագործվում էին կլոր քարեր, որոնք համարեցված էին միավորի՝ օխայի (հոխա) ծանրությանը։ Հոխայի ստորաբաժանման միավորը տրամն էր (դիրհեմ), 1 հոխան հավասար էր 400 տրամի։

Այս շրջանում հեղուկի չափսերը հիմնված էին դիրհեմի ծանրության վրա, լիտրի և կիլոգրամի միջև գոյություն ունեցող ծանրության տարբերություններ չկային։ Եթե մի հոխա շաքարը 400 տրամ էր, չափված մի հոխա ձեթն էլ 400 տրամ էր, այնպես որ կշռաքարի և հեղուկների չափի միջև ծանրության ոչ մի տարբերություն չկար։

1, 5, 10 կամ 15 տրամանոց կշռաքարեր չկային, մինչև 25 տրամ և գուցե ավելի ծախողը ավելի ծանր էր տալիս գնորդին, որպեսզի աչքը ծախված ապրանքի վրա չմնար, ուրեմն, հոխայի ստորաբաժանման միավորը թեև տրամն էր, բայց իրականում հիմքը թուղթն էր։

Մեկ թուղթը հավասար էր 25 տրամի, նույնը և հեղուկ չափելիս։

Երկու « 50 « «
Չորս « 100 « «
Ութ « 200 տրամի. որը կոչվում էր մեկ նուկի կամ կես հոխա։
Մեկ նուկին « 200 տրամի։
Երկու « 400 « որը հավասար էր 1 հոխայի։

Կշռաքարերի ամենամեծ միավորը լիրն էր (լիռ), որը հավասար էր 6 հոխայի։ Կային 3, 4, 5 և 6 նուկինոց և լրանոց կշռաքարեր։

Երեք նուկին հավասար էր 600 տրամի կամ մեկուկես հոխայի։
Հինգ « 1000 « երկուսուկես հոխայի։
Վեց « 1200 « երեք հոխայի (կես լիր)։

Տասներկու նուկին կամ 6 հոխան հավասար էր 2400 տրամի կամ 1 լիրի։

Թեև Թուրքիայի կենտրոնական շրջաններում կային ծանրություններ կշռելու տարբեր միջոցներ՝ ղանբար, չեքի և այլն, լեռնաշխարհում տնտեսության զարգացածության պատճառով կշեռքների այդ ձևերը չէին օգտագործվում։ Առուծախի միակ միջոցը նախնադարյան կշեռքն էր, իր թուղթ, նուկի, հոխա, լիր կշռաքարերով։

Որովհետև չեքիով կշռում էին մեծ ծանրություններ՝ փայտ, քար, կիր, ավազ, իսկ Դերսիմում բնական այդ հարստությունները անվճար էին և չէին վաճառվում, ուստի բնակիչները չեքիի գոյությանն անծանոթ էին, պահանջ չէին զգացել մտածելու այդ կշռաքարերի մասին կամ գոնե մոտավոր տարբեր ձևը ստեղծելու։

Հացահատիկային և այլ հատիկային ապրանքները կշեռքով չէին ծախվում։ Ցորենի, գարու, քիլուտի և այլնի վաճառման միավորը կոտը և իր ստորաբաժանումներն էին։

Կոտի ստորաբաժանման միավորը ղոչբուռն էր (երկու ձեռքերի միացման պարունակությունը)։

1. Ղոչբուռ—Երկու ղոչբուռը հաշվում էին 1 ռուպ, մեկուկես հոխա։

2. Ռուպ—կոտի մեկ ութերորդը ռուպն էր։

3. Ճինիկ—կոտի մեկ չորրորդը ճինիկն էր (2 ռուպը հավասար էր 1 ճինիկի, 3 հոխայի)։

4. Կեսկոտ—2 ճինիկը կես կոտ էր, որը հավասար էր 6 հոխայի կամ 8 կգ-ի։

5. Կոտ—2 կես կոտը 1 կոտ էր, որը հավասար էր 12 հոխայի կամ 16 կգ-ի։

Մինչև այստեղ միավոր նկատված կոտը ինքն իր մեջ ունեցավ լրացուցիչ չորս միավոր, որոնք կազմեցին բուն միավորը՝ կոտը։

Ուրեմն, կոտը նկատվում էր մանրածախ առևտրի չափման գլխավոր միավորը, որն իր կարգին դառնում էր մեծածախ առևտրի չափման գլխավոր միավորի ստորաբաժանելին, այսինքն՝ սոմառի 1/16-րդ մասը։

1. 1 կոտը սոմառի մեկ տասնվեցերորդ ստորաբաժանելին էր, որ հավասար էր 12 հոխայի։

2. 1 բիլեն երկու կոտ էր կամ 2 կոտը 1 բիլե և կամ սոմառի մեկ ութերորդը, 24 հոխա.

3. 2 բիլեն սոմառի մեկ չորրորդ մասն էր. բաւորդ սոմառը 18 հոխտ կամ 64 կգ էր։
4. 4 բիլեն կամ 8 կոտը սոմառի կեսն էր՝ կես սոմառ, 96 հոխտ կամ 128 կգ։
5. 8 բիլեն կամ 16 կոտը 1 սոմառ էր, որի կշիռը 192 հոխտ էր կամ 256 կգ։

Այսպիսով, արմտիքի չափի առանձնական կոտորակի ստորաբաժանելին զոչուտն էր, որը աստիճանական զարգացումով դառնում էր կոտ, բիլե, ապա՝ սոմառ։ Այսպեղ էլ սոմառն էր դառնում միավոր և ղեկավարում ստորաբաժանելիներին՝ կոտին և բիլեին։

Եթե կոտն ու սոմառը արմտիքների չափման չափանիշներ էին, կարելիները, սարաստությունները, ճամփի հեռավորությունը, բարձրությունները և խորությունները ունեին ըստնց առանձնահատուկ չափանիշները և չափման ձևերը։

1. Թիզ—ձեռքի բթամատի ծայրից մինչև ճկույթի ծայրը, լարված վիճակում, մեկ թիզ էր։ Երեք թիզը հավասար էր մեկ արշինի։
2. Ոտ՝—1 ոտը հաշվում էին կես արշին (միջին հաշվով). երկու ոտը մեկ արշին էր։
3. Քայլ (ատրմ)—ձախ ոտի բթամատից մինչև աջ ոտի բթամատի ծայրը, ոչ լարված, այլ սովորական բայլվածքով երկու սաքերի միջև գոյացած տարածությունը հավասար էր 1 արշինի։
4. Թև—ձախ ձեռքի միջամատի ծայրից մինչև թևի այն մասը, որը հավասարվում էր ուսին. հաշվում էին մի արշին։
5. Ղուլաճ—երկու թևերը հորիզոնաբար դեպի աջ և ձախ տարածած վիճակում, ձախ ձեռքի միջամատի ծայրից մինչև աջ ձեռքի միջամատի ծայրը կոչվում էր ղուլաճ, որը հավասար էր երկու ձեռնափայտի (ձեռնափայտ)։
6. Դավազան (ձեռնափայտ, տեղնեկ, տեկենեկ)—ձախ ձեռքի միջնամատի ծայրից մինչև կրծքի փոսիկի կենտրոնը (երկու ծծերի մեջտեղը) կես ղուլաճ, կամ մեկ տեղնեկ էր, ձեռնափայտի բարձրությունը հավասար էր 90 սմ, հետևաբար 1 ղուլաճը 2 տեղնեկ կամ 180 սմ էր. կես ղուլաճը՝ 1 տեղնեկ կամ 0,90 մ։
7. Գիրկ—երկու թևերը կլորաձև մինչև երկու ձեռքերի միջնամատների ծայրերն իրար հասնելը մի գիրկ էր։ Գրկի ուղղահայաց տրամագիծը 0,50 մ էր (մի գիրկ փայտ, մի գիրկ խոտ և այլն)։
8. Պարան—այծի մազից հյուսված պարանը բացի կապելու, կրելու միջոց օգտագործվելուց, կիրառվում էր նաև որպես չափ։ Պարանի երկարության չափը հիմնված էր ղուլաճի չափի վրա։ Մեկ ղուլաճից մինչև 25 ղուլաճ՝ երկարությամբ պարաններ կային, որոնք օգտագործվում էին տարածություններ չափելիս, արաների բաժանելիս։ Պարանները լինում էին 5, 10, 15, 20 և 25 ղուլաճ։ 25 ղուլաճ երկարություն ունեցող պարանը հավասար էր 50 տեղնեկի։
9. Սատ—միջին հաշվով ընդունված միավորը ձեռքի մատն էր, բայց շատ մատը միասին առած հաշվում էին 0,10 մ։ Մատը ղուլաճի կամ տեղնեկի ստորաբաժանման միավորն էր։
10. Կարժ փետ—մտնված և ոլորված թելը (թել), որը նախապես բարմանի վրայից կծիկների վերածված էր, ներկելիս կծիկներից կարժերի էին վերածում։ Կարժի փայտ երկարությունը հավասար էր կես տեղնեկի՝ 0,45 մ, որի մի ծայրը շաթալ էր, մյուս ծայրը հորիզոնական ձևով կոթ ուներ, թելի մեկ ծայրը կապում էին կոթին, ապա անցնում շաթալի միջով և կրկին կոթի վրայով։ Շաթալ փայտի կենտրոնից անցած թելը հասնելով կոթին, հավասարվում էր մի ձեռնափայտի չափին՝ 0,90 մ, այդպիսով, շաթալի միջից անցած հագար թելը մի կարժ էր, որի երկարությունը 1000 ձեռնափայտ էր։

Ավելի փոքր կարժը կոչվում էր արմկակարժ. որը կազմում էր ձեռքի բթամատի և ցուցամատի միջև գոյություն ունեցող տարածության (որը շաթալի դեր էր կատարում) և արմունկի ծալվածքի վրա՝ ձախ թևը ուղղահայաց վեր էին բարձրացնում, թելի մի ծայրը կապում բթամատին և երկարելով դեպի ծալված արմնկատեղը, կրկին բերում և անց էին կացնում բթամատի և ցուցամատի մեջտեղից։ Այս ձևով փաթաթված 500 թելը մի արմկակարժ էր։

Թեև կալը երկու կողմերում շաթալ էր, որը շալի, բրդյա կերպասի, գոգնոցի կտորի, տնայնագործության մեջ մարդու դեր էր կատարում, միևնույն ատեն չափս էր։
11. Ավուր մի ճամփա, տիսր օրհարսաք (կես օր), տիսր էտիճ։ Կիլոմետրի մասին գաղափար չունեցող գյուղացին, ճանապարհների հեռավորությունը բնորոշելու իր չափերը բացատրում էր փորձառությամբ ձեռք բերված տվյալներով։
12. Օրավար—մի ղույդ եղով արևածագից արևամուտ (աղոթարանից մայրամուտ) արորով հերկվորի կատարած հերկը մի օրավար էր։ Օրավարը արտի մակերեսի չափման հիմք էին ընդունում, բայց ավելի գործնականը պարանաչափն էր։

Չափերի կարգին այստեղ կարելի էր նշել նաև թել մի իսոտ. բնատակով փայտը (պլրեսլ).

խույց այնքանն էլ բավական է բնորոշելու չափերը։

Այժմ անցնենք այդ չափսերի գործածման ձևերին։

Տնայնագործության բնագավառում բոլոր գործվածքների՝ տղամարդկանց և կանանց արտաՀագուստների կամ ներքնազգեստների Համար գործված կամ Հյուսված կտորեղենի լայնքը չափում էին Թզով, մատների ստորաբաժանման օգնությամբ, իսկ երկարությունը՝ Թևով կամ ղուլաճով։

Լեռների բարձրությունները, ձորերի խորությունները, երկարությունը (Հեռավորությունը) չափում էին քայլերով, իսկ Թմբերի և արաՀետների լայնքը՝ ոտքերով։ Ծովի մակերեսից ուղիղ գծով լեռների բարձրության չափերի մասին գաղափար չունեին։

Ճանապարհների երկարությունը, գյուղից-գյուղ Հեռավորությունը չափելու Համար ոչ կիլոմետր և ոչ էլ ժամ էին օգտագործում, այլ ավուր մը ճամփա տիռր, ղուշլուխ տիռր, օրհասար տիռր, էտինք տիռր, մայրամուտ բնորոշումները չափված կամ ուղիղ ժամերով Հաշված Հեռավորություն ճշտող չափսեր չէին։ Նախ, որ լեռնաբնակ գյուղացու և դաշտաբնակների քայլվածքների միջև մեծ տարբերություններ կային, լեռնաբնակի բնորոշած «ավուր մր ճամփան» դաշտաբնակի մեկուկես օրվա ճանապարՀն էր։ Երկրորդ պարագան այն էր, որ Դերսիմի լեռնային պայմանները Հնարավորություն չէին տալիս տեղական ընդունված չափանիշներով ճշգրիտ գաղափար կազմելու Հեռավորությունների մասին։ Դաշտային շրջանում դերսիմցու քայլվածքով «ավուր մը ճամփան» Համասար էր միջին Հաշվով 12 ժամի կամ 60 կմ, իսկ լեռնային բարձրություններ ելնելիս՝ 12 ժամի կամ 40 կմ։ Որպես Հիմք ընդունելով «ավուր մը ճամփան», կարելի էր գտնել օրվա ստորաբաժանումները՝ տիռր ղուշլուխը Համասար էր 3 ժամի կամ 15 կմ, տիռր օրՀասարը՝ 6 ժամի կամ 30 կմ, տիռր էտինքը՝ 9 ժամի կամ 45 կմ։

Եթե վերելքը կատարվում էր 6 ժամում 20 կմ, ապա վայրէջքի «ավուր մը ճամփան» նվազում էր կես առ կես։ Այսպես, «ավուր մը ճամփա» լեռ բարձրացողը եթե քայլել էր 12 ժամվա ընթացքում 40 կմ ճանապարՀ, իջնելիս նույն ճանապարՀը անցնում էր կես օրում, այսինքն՝ 6 ժամում, երբեմն էլ նույնիսկ 3 ժամում։

Ճշգրիտ ջրտշտիման մասին ղաղափար չունեին, ձորերի ջրերը չափում էին տեյնեկով կամ մարմնի զանազան մասերով, մինչև ծունկը, մինչև պորտը, ծծերը, ուսը և մարդաբոյ։

Լճերի և գետերի խորությունը և տարածությունը կամ լայնությունը չափում էին պարանով կամ ղուլաճով։ Ջրաբաշխման ժամանակ ջուրը Հաշվում էին գրկով կամ բաՀով, այսինքն՝ մի գրկի տրամագծով լիքը ջուրը մի գրկաչափ էր, առանց դիտենալու ջրի տարողության կամ մեկ գիրկ ջրի քանակության կամ պարունակության մասին։ Գլխավոր պենտերից բաժանվող կենտրոնական առուների բերանը դրված էին ծակ քարեր, որոնց տարողությունը Համասար էր մի գրկաչափի արամագծին, այսինքն՝ 0,50 մ բարձրություն և 0,50 մ լայնք։ Կես գրկաչափը նույն ծակի կեսն էր, ուր կային փորված նշաններ՝ ծակ քարի 0,35 մ խորության երկու կողմերի վրա։

Առուների ջուրը չափում էին բաՀով։ ԲաՀի բարձրությունը 25 սմ էր, լայնքը՝ 12,5։ Երկու բաՀի լայնքը և մի բաՀի բարձրությունը լրիվ մի առու էր կամ կես գիրկ ջուր։

ԼեռնաշխարՀում ջրի առատության պատճառով ջրՀորներ չկային, իսկ դաշտավայրերում ջրՀորների խորությունը Հաշվում էին ղուլաճով՝ երեք ղուլաճ, Հինգ ղուլաճ և այլն։

Արտերի սաՀմանները բնորոշվում էին Թմբերով (Թումղ), իսկ լեռների, անտառների կամ արոտավայրերի սաՀմանները՝ ձորերի ուղղությամբ դրված քարե նշանակների օգնությամբ կամ լեռնագագաԹների սաՀմանագծումով (այսինչ գագաԹից մինչև այնինչ լեռնագագաԹը, այսինչ ձորի աջ կամ ձախափից մինչև չաԹալքարը և այլն)։

Ուշագրավ է այն պարագան, որ գյուղացիությունը խուսափում էր իր տնտեսության մասին տեղեկություններ տալ ուրիշին, չէր սիրում Հպարտանալ և պարծենալ իր ունեցվածքով, ընդՀակառակը, անորոշ պատասխաններ էր տալիս Հարցնողներին և ներքնապես նեղվում, երբ Հարցապնդում էին իրեն։ «Չար աչից, չար նազարից, դուռի պեյԹանից և ղաֆիլ ղատայից» զերծ մնալու Համոզմամբ նա նույնիսկ ինքն իր Համար չէր ուզում Հաշվել իր արտերի բերքը, խոտերի դեզերը, անասունների Թիվը, փեԹակները, նույնիսկ տան անդամների Թիվը և Հավերը։ Չար աչքից խուսափելու երկյուղը այնքան խորը արմատ ուներ գյուղացիության Հոգեբանության մեջ, որ տերը նույնիսկ վախենում էր իր «նազարից»։

— Խաշո աղեր, մաշալլաՀ, օճախիդ քյուլֆետը մեծացել է, երիբների Թիվը կվելցել, սաղ ըլլին, քա՞նի պոդաղ են,—Հարցմանը՝

— Համրս ապեր, տըղընոցի աըղըները տհմը չիմ համըսեր (համրել),—պատասխանում էր։

Նույն խուսափողական պատասխաններն էին տալիս այն բոլոր հարցասերներին, որոնք ուզում էին իմանալ օջախի վերաբերյալ որևէ տեղեկություն, իսկ երբ ստիպված էր հաշվել մեկն ու մեկը, նախ խաչակնքում էր երեք անգամ, ապա դիմում ս. Կարապետի պաշտպանությանը՝ երկնավոր թագավորի մոտ բարեխոսելու, չարը հեռու տանելու, խեր ու բարիք բերելու ակնկալությամբ, հետո միայն շշունջով ինքն իր համար հաշվում էր, առանց ոչ ոքի, նույնիսկ իր տան անդամներին, տեղյակ պահելու գումարի մասին։

Մի օր Մստոյից Խորայիլը հարցրեց Սեդո պապուն (մոտիկ ընկերներ էին)։

— Սեդո, ձեր ոչխարները ի՞նչ ղրտրր ին, որ ըս ղրտրր ղօջ պայիս կը։

— Աստու ավածին շատին, չոլուխ-չոճուխը ստին խմին կը, նիստաֆիրները պակաս չին, ամմա բան մը իլ էվելնա կը։

Բացարձակապես լուռ էին մնում կովի, ոչխարի, այծի կաթնատվության չափերի մասին, նույնիսկ քամահրում էին լավ կաթ տվող անասուններին՝ «Ջիտիմ (չդիտեմ) ինչը դիպած է ըս մեհսումիս, որ կաթը ցամքեր, ուրը քաշվեր, ծծերը թառմեր ին»։ Հաճախ կաթնատու անասունների ոտների տեսանելի մասերին մայիս (լույծ, թրիք) էին քսում. վզից հմայիլ կախում, ականջին կապույտ ուլունք անցնում։

Ոչխարների համրանքը երբեք հրապարակով չէին կատարում, հոտը տանում էին մի հեռավոր ձորամեջ, կանգնեցնում նեղ անցքի առջև, անասունները ինքը զույգ-զույգ համրում ու քշում էր ձորամեջ, մինչև համրանքը հասներ 50 զույգի, այն ատեն գավազանի վրա դանակով մի քեռթիկ էր անում, այդ մի քեռթը 100 ոչխար էր, և շարունակում նույն ձևով հաշվել ու նշումներ կատարել մասնավորապես հաշվառման համար պատրաստված գավազանի վրա։

Թխսկանը իր ճուտերով դրսցու աչքից պահելու համար, երբ մեկը մոտենում էր տան դարբասին, ագլին կամ դոմին, տանտիկինը որևէ ձևով իր վերնահագուստի երկու կողմերը լայն բանալով, կանգնում էր ճուտերի առջև և թաքցնում տեսողությունից։

Էրվնած թեղի ցորենը կալի մեջտեղում բլրաձև թեճի էին վերածում և հրավիրում շահնային (շայնա), որ կոտով չափի և կամ, եթե ժամն ուշ էր, թեճր կնքի։

Թեճր կնքում էին բոլորաձև փայտե կնիքով, որի եզրի մասը ավելի լայն ու կլոր էր, դնելով նշանում և վերջում կասցի ձև էր ստանում։ Այդ կնիքի փայտը փորագրված էր և խաչը հետք էր թողնում ցորենի թեճի վրա։ Կնքումը կատարվում էր բոլորաձև, մի քանի կարգ, ապա ուղղահայաց՝ վերևն վար և թեճի գլխին, մեկի ծայրը դրեթե մյուսի հատակին կպցրած, այնպես որ հնարավոր չէր մի ափ ցորեն վերցնել առանց կնիքը խախտելու, իսկ կնիքի խախտումը բրեական հանցագործություն էր նկատվում և խիստ պատժի ենթարկվում։

Կոտը նուրբ տախտակից պատրաստված կլորաձև. ավելի բարձր, քան լայնքը, արմտիքի չափ էր։ Բերանի և տակի մասերում մեկ մատ լայնքով բարակ երկաթե շրջանակ ուներ։ Բերանի կողմը եզերքին հավասար էր, ճիշտ կենտրոնում ամրացված էր հղկված տափակ երկաթ։ Ներքևից վեր ուղղահայաց նույնպես երկաթ էր, բայց մի կլոր սյուն ամրացված էր կոտի հատակին, իսկ մյուս ծայրը՝ բերանի երկաթին, որի վրայից սիլեճիկով ցորենը հավասարեցնում էին կոտի բերանի եզրերի հետ։

Թեճը կնքելու փորագրած կնիքի երկարությունը 20, լայնքը՝ 15, հաստությունը՝ 3 սմ էր։